

ԱՂՕԹՔԻ ԵՒ  
ԾՈՍԱՊԱՀՈՒԹԵԱՆ  
ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Ծովապահուծեամբ մարմինը կը չար-  
չարուի ու կը տկարանայ, եւ եթէ ուզէ  
իսկ չի կրնար պոռնկիլ: Այսպէս օրինակ,  
կը պատմուի, թէ վաւաշոտ մարդ մը  
գեղեցիկ եւ ազնուական կին մը կը սիրէ  
եւ անոր հաւանութիւնը կը խնդրէ: Կինը  
կ'ըսէ. «Եթէ հետս անօթի մնաս մինչեւ  
քեզ կերակուրի կանչելս, ուզածդ թո՛ղ  
ըլլայ»: Մարդը կը համաձայնի: Կինը եր-  
կու օր, հետը նաեւ մարդը՝ ծով կը  
բռնեն: Երբորդ օրը ան կը պատրաստէ  
սեղանը, ինչպէս նաեւ շքեղ անկողին մը,  
եւ կանչելով մարդը կ'ըսէ անոր. «Ի՞նչ-  
պէս կ'ուզես, անկողի՞ն մտնենք, թէ  
նաշենք»: Մարդը կ'աղաղակէ. «Կը հրա-  
ժարիմ անկողինէն, որովհետեւ աշխար-  
հի բոլոր կիները կ'ատեն հիմա, բայց  
կ'ուզեմ նաշել, որպէսզի սովէ չմեռնիմ»:

Տեսա՞ր, թէ երբ ծով չէր բռնած ինչ-  
պէս կը նեղուէր ախտէն, իսկ պահեցո-  
ղութենէն ետք բժշկուեցաւ անկէ: Ուստի,  
նիշդ ըսուած է, թէ պոռնկութիւնը ծովով  
կը բուժուի, իսկ մտային փորձու-  
թիւնները՝ աղօթքով եւ այսպէս ծովով եւ  
աղօթքով մեղքերու թողութիւն կը  
ստանանք Աստուծմէ, որովհետեւ մեծ  
գօրութիւն ունի աղօթքը, մանաւանդ  
գիշերային աղօթքը: Ինչպէս, որ Պօղոսն  
ու Շիղան գիշերը աղօթելով շրթաները  
փակեցին եւ բանտին դռները բացին  
(Գործք. 16.25-27), նոյնը ընենք եւ մենք  
բանանք ո՛չ թէ բանտը, այլ՝ երկինքը:

ՄԵԾ ՊԱՆՈՅ ԵՐՋԱՆԻՆ ՎԱՐԱԳՈՅՐ ԳՈՅԷԼ  
ԻՆՉ ԿԸ ՆՇԱՆԱԿԷ



Մեծ պահոց ընթացքին 45 օր վա-  
րագոյրը գոց կը մնայ ի նշան նա-  
խածնողներու մեղանշումին, եւ գղջու-  
մի ու ապաշխարութեան շրջան մը կը  
սկսի հաւատացեալներու հոգեւոր  
պատրաստութեան, դիմաւորելու հա-  
մար Աստուածորդույն հրաշափառ Ս.  
Յարութիւնը:

Այստեղ կ'ուզենք յիշատակել, որ  
Մեծ Պահոց ընթացքին սեւ կամ մուգ  
գոյն վարագոյր կը գործածուի:

Անցեալին կարգ մը եկեղեցիներ  
որդեբարձ էին երկրորդ վարագոյրի մը  
դրութիւն, որ աւելի փոքր կ'ըլլայ, եւ  
ա՛յդ վարագոյրը կը գոցուէր երբ պա-  
տարագիչ ֆահանս կը նաշակէր Ս.  
Հաղորդութիւնը եւ կ'ըմպէր Քրիստոսի  
Արեան փոխարկեալ գինին:

Յոյն Ուղղափառ եկեղեցույ մօտ  
վարագոյրի փոխարէն Ս. Սեղանը մաս-  
նաւոր սրբանկարներով ծածկուած  
կ'ըլլայ ժողովուրդի տեսողութենէն,  
կեղրոնը ունենալով մասնաւոր բաց-  
ւածք մը, ուրկէ պատարագիչը խաղա-  
ղութիւն կու տայ:



ԲՈՒ ԽՕՍԵՐ ԽՄ ՈՏԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԻՆՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ  
(Ս. 119.105)

ԺԶ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 19 ՓԵՏՐՈՒՄ 2023 ԹԻՒ 8

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ  
58.1-14: 3ռ. 13.11-14.25: Մատթեոս 6.1-21

Ա. ԲԱՌԱՍՆՈՐԴԱՅ: ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 6.1-8

Չգո՛ւշ, Աստուծոյ հանդէպ ձեր պարտաւորութիւնները մարդոց ներկա-  
յութեան մի՛ կատարէք ցոյցի համար, որովհետեւ այդ պարագային վարձատ-  
րութիւն պիտի չստանաք ձեր երկնատըր Հօրմէն:

Երբ ողորմութիւն կ'ուզես տալ՝ փող ու թմբուկով մի՛ ընէր, մարդոց ուշադ-  
րութիւնը գրաւելու համար, ինչպէս կեղծատրոնները կ'ընեն ժողովարաններու մէջ  
եւ հրապարակներու վրայ՝ մարդոցմէ գովասանք ընդունելու ակնկալութեամբ:  
Վստահ եղէ՛ք, միայն այդ է անոնց վարձատրութիւնը: Ընդհակառակը, դուն երբ  
ողորմութիւն պիտի տաս, ձախ ձեռքդ թող չգիտնայ, թէ ինչ կ'ընէ աջ ձեռքդ:  
Այսպիսով ողորմութիւնդ գաղտնի ըրած կ'ըլլաս, եւ քու երկնատըր Հայրդ որ ան-  
տեսանելի է, բայց կը տեսնէ կատարածդ, քեզ պիտի վարձատրէ յայտնապէս:

Նմանապէս, երբ կ'աղօթես՝ կեղծատրոններուն մի՛ նմանիր, որոնք կը սիրեն  
ժողովարաններու մէջ եւ հրապարակներու անկիւնը աղօթել, որպէսզի մարդիկ  
իրենց աղօթելը տեսնեն: Վստահ եղէ՛ք, միայն այդ է անոնց վարձատրութիւնը:  
Այլ երբ պիտի աղօթես, մտի՛ր սենեակդ, գոցէ՛ դուրը եւ աղօթէ՛ քու երկնատըր  
Հօրդ, որ անտեսանելի է եւ Հայրդ, որ կը տեսնէ կատարածդ, քեզի պիտի հա-  
տուցէ յայտնապէս: Տակաւին, երբ կ'աղօթես, մի՛ շատախօսեր հեթանոսներուն  
նման, որոնք կը կարծեն, որ եթէ երկար աղօթեն՝ Աստուած պիտի լսէ զիրենք:  
Արդ, մի՛ նմանիք անոնց, որովհետեւ ձեր Հայրը զիտէ, ինչ որ պէտք է ձեզի,  
նոյնիսկ երբ տակաւին իրմէ խնդրած չէք:

Ուրեմն այսպէ՛ս աղօթեցէք. «Հայր մեր երկնատըր, սրբաբանուի՛ անունդ.  
թող զայ արքայութիւնդ, թող կատարուի քու կամքդ, ինչպէս որ երկինքի մէջ՝  
այնպէս ալ երկրի վրայ: Ամենօրեայ մեր հացը այսօր եւս տուր: Ներէ՛ մեր յան-  
ցանքները, ինչպէս որ մենք կը ներենք անոնց՝ որոնք մեզի դէմ նոյնպէս յան-  
ցանք կը գործեն: Եւ թոյլ մի՛ տար, որ փորձութեան մէջ իյնանք, այլ՝ մեզ չարէն  
ազատէ: Որովհետեւ քո՛ւկդ են միշտ՝ արքայութիւնդ, գօրութիւնդ եւ փառքը:  
Ամէն»: Եթէ մարդոց ներք իրենց յանցանքները, ձեր երկնատըր Հայրն ալ պիտի  
ներէ՛ ձեզի: Իսկ եթէ մարդոց չներէք իրենց յանցանքները, ձեր երկնատըր Հայրն  
ալ պիտի չներէ՛ ձեր յանցանքները:

# ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

## ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆՂԱՆ



Բարեկենդան կը նշանակէ բարի կենդանութիւն, խրախմանք, նոյն եւ առատ ուտելիքներով վայելելու օր:

Գլխաւոր շաբաթապահերու նախորդ Շաբաթ օրը կը կոչուի բարեկենդան եւ այդ առիթով կը թոյլատրուի աւելի նոյն ուտելիքներով օրացոյցի մէջ յաճախ կը հանդիպինք բարեկենդանի յիշատակութեան, որովհետեւ կարելի է պահել բերրի ունին իրենց բարեկենդանը:

Բայց բարեկենդաններուն մէջ յատկանշական է Մեծ Պահքի նախընթաց Կիրակի օրը, որ կը կոչուի **ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆՂԱՆ**:

Բուն Բարեկենդանի օրը կը պատրաստեն նոյն սեղան, կը կատարեն դիմակաւոր խաղեր, խրախմանքներ եւ այլն:

Վանքերու մէջ նոյնիսկ Բուն Բարեկենդանի օրը որոշ ազատութիւն կը տրուէր եւ այդ օրը ժամանակին կը կոչուէր **ԱՐԵՂԱԹՈՂ**:

Բուն Բարեկենդանի նախորդ օրը՝ Շաբաթ երեկոյեան ժամերգութեան ընթացքին, եկեղեցոյ խորանի վարագոյրը կը գոցուի, եւ նոյն օրը կը սկսի արդէն ապաշխարութեան շրջանը: Հոգեւոր արարողութիւնները կը մեղմանան, Ս. Պատարագը կը մատուցուի վարագուրուած խորանին ետեւը: Այսպիսով կը սկսի քառասունօրեայ ապաշխարութիւնը եկեղեցոյ մէջ: Եկեղեցոյ անուանակոչութեան եւ կամ կարելի սուրբերու տօներու առիթով, երբ կը մատուցուի հանդիսաւոր Սուրբ Պատարագ, վարագոյրը կը բացուի եւ տեղի կ'ունենայ բաց պատարագ:

Բուն Բարեկենդանի շաբաթները կը պատմեն, թէ ինչպէ՞ս ստեղծուեցաւ մարդը եւ ապրեցաւ դրախտի փափկութեան մէջ: Այնտեղ դրախտի մէջ մարդը «ցնծայր գուարնացեալ անտրիւրական խնդութեամբ», որովհետեւ միշտ կը տեսնէր Աստուծոյ: Բուն Բարեկենդանի շաբաթներու առանցքը «Դրախտի փափկութիւնը», «Դրախտի գուարնութիւնը» եւ նախատիպ մարդու՝ Ադամի երջանիկ վիճակը կը կազմէ: Քրիստոսը կը յիշատակուի որպէս երկրորդ Ադամ, որ իր միջոցով մարդոց արժանի դարձուց «Դրախտի փափկութեան»:

Բուն Բարեկենդանի շաբաթները նոյն օրը գուարնացնող մարդոց կը յիշեցնեն նաեւ Դրախտի հոգեւոր երջանկութիւնը եւ ուրախութիւնը:

## ՇՆՈՐԱԿՈՐ ԲԱՐԵԿԵՆՂԱՆ ԲԱՐՈՎ ՇԱՐՈՒԹԵԱՆ

### ՀՈԳԵՒՈՐ ՊԱՏԳԱՍ

## ՓՈՐՉՈՒԹԻՒՆԸ ԱՌԻԹ ՄԸՆ Է ՓԱՍՏԵԼՈՒ, ՈՐ ՏՈԿՈՒՆ Է ՄԵՐ ՀԱՄԱՏՔԸ

«Սուրբ Հոգին կողմէ տարուեցաւ անապատ»: Սուրբ Հոգին ինքն էր, որ մղեց Յիսուսը պատերազմելու Սատանային դէմ քանի քաջ գիտէր, որ Յիսուս յաղթական դուրս պիտի գար այդ պատերազմէն: Սուրբ Հոգին ուզեց փաստել Սատանային, որ Յիսուս յաղթական ՄԱՐԴ է: Ան ուզեց ցոյց տալ Բելիարին Յիսուսի բացարձակ անարատութիւնն ու սրբութիւնը:

### ՄԵՐ ՍՈՐՎԵԼԻՔ ՀՈԳԵՒՈՐ ՊԱՍԸ

Սուրբ Հոգին նոյնը կ'ընէ մեզի: Ան երբեմն թոյլ կու տայ, որ Սատանան փորձէ մեզ, ոչ թէ մեզ պարտութեան մատնելու, այլ՝ մեր յաղթական ըլլալը ցոյց տալու համար Սատանային եւ մեր շրջապատին: Սիրելի հաւատակից եղբայր եւ քոյր, իւրաքանչիւր փորձութիւն առիթ մըն է փաստելու, որ տոկուն է մեր հաւատքը, առիթ մըն է փաստելու, թէ մենք կը վստահինք Տէր Յիսուսին, առիթ մըն է մեր սէրը արտայայտելու Աստուծոյ հանդէպ: Չփախցնենք նման առիթ: Տրտունջքի եւ նահանջի առիթ չդարձնենք նման առիթ:

ԱՌԱՎ 13.7  
Մարդիկ կան, որ իրենք գիրենք հարուստ կը ձեւացնեն բայց ոչինչ ունին, եւ կան մարդիկ, որ իրենք գիրենք խեղճ կը ձեւացնեն եւ տէր են մեծ հարստութեան:

### ԵԹԷ ԿԱՍ ԵՐԲ Կ'ՈՒՋԵՍ...

## ՊԱՆԵՆՈՒԹԻՒՆ

**Ս**եր ժամանակակից սերունդը պահեցողութիւն ըսելով թերեւս կը հասկնայ մտեղէնէ, կաթնեղէնէ եւ ամէն տեսակի կենդանական արտադրութենէն հրաժարիլ: Ասիկա սակայն պահքի մասին ուշ ժամանակներուն եւ քաղքենի դասակարգին ըմբռնումն է: Սկիզբէն այնպէս չէ եղած: Ըստ Աստուածաշունչի տուեալներուն, պահեցողութիւնը սուգի եւ ցաւի շրջան մըն է, ինքնագրկանք մը՝ կամ ինքզինքին տրուած կամաւոր պատիժ մը, որ կ'իրագործուէր որոշ ժամանակ մը ամբողջովին հրաժարելով ուտելէ եւ խմելէ, ինչպէս նաեւ՝ ամէն տեսակի ՀՍՃՈՅՔէ: Կարելի է այս վերջին պարագան, այսինքն՝ հրաժարիլ նաեւ հաճոյքէ, որովհետեւ պահք եւ հաճոյք իրարու հակադիր երեւոյթներ են եւ հետեւաբար կարելի չէ երեւակայել պահեցողութիւն մը, որուն կ'ընկերանայ նաեւ խաղ, ուրախութիւն եւ պար: Ուրեմն կրօնական նպատակով ինքզինքին պարտադրուած որեւէ գրկանք պահեցողութիւն է:

Պահքէն անբաժան էր ԱՂՕԹՔԸ:  
Եթէ ուսումնասիրենք սուրբ Գիրքը, պիտի տեսնենք, թէ ուր որ պահքի մասին հրաման կը տրուի՝ կը յանձնարարուի միաժամանակ աղօթքը:  
Մեր երկնաւոր հայրը օրհնէ եւ ընդունէ ձեր պահեցողութեան: Աստուծոյ օրհնութիւնը ձեր բոլորին հետ միշտ եւ յաւիտեան: